ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N_____
------- ----------2022թ.

ԻԱԿ ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(Ձեր՝ 28.12.2021 հ.483201, մտից Գեղարքունիքի
մարզպետարան՝ 29.12.21թ Մ-24330)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հանձնարարությամբ Ձեզ եմ ներկայացնում հետևյալ տեղեկությունը՝

1.Գեղարքունիքի մարզպետարանում ՁԼՄ-ներից և հասարակական կազմակերպություններից ստացված հարցումների վերաբերյալ կատարվում է առանձին հաշվառում, իսկ քաղաքացիների կողմից ուղարկված հարցումները ներառվում են դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ:

2.Գեղարքունիքի մարզպետարանում ՁԼՄ-ներից և հասարակական կազմակերպություններից ստացված հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը վերապահված է մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի պետի ու տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի վրա:

3. ՁԼՄ-ներից և հասարակական կազմակերպություններից ստացված ցանկացած հարցում մարզպետարանի քարտուղարության կողմից մուտքագրվում է mulberry համակարգ, այնուհետև մակագրվում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին: Հարցման պատասխանը պատրաստ լինելուն պես ընդհանուր բաժնի պետը հարցումը և դրա պատասխանը mulberry համակարգով տեղեկացման միջոցով տրամադրում է մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ մարզպետարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում հրապարակելու համար:

4.ՁԼՄ-ներից և հասարակական կազմակերպություններից ուղարկված հարցումները և դրանց պատասխանները հրապարակվում են Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի՝ http://gegharkunik.mtad.am/ հարցումների վիճակագրություն բաժնում՝ http://gegharkunik.mtad.am/harcum/:

5.Այո, Գեղարքունիքի մարզպետարանը ունի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ:

6.Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել Գեղարքունիքի

մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Շահբազյանը:
Այդ մասին տեղեկատվությունը և նշանակման վերաբերյալ համապատասխան ակտը տեղադրված են Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումներով.
http://gegharkunik.mtad.am/address/
http://gegharkunik.mtad.am/files/legislation/53260.pdf:
7.Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը վերջին տարիների ընթացքում մասնակցել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված այն դասընթացներին և վերապատրաստումներին, որոնց մասնակցության վերաբերյալ կենտրոնի կողմից հրավեր է ստացել:

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Recoverable Signature

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Signed by: KHLGHATYAN SEVAK 4007580049

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ
Հ.Շահբազյան
Հեռ. 060 65 06 37